Վահան Զանոյան



Երկիր	ԱՄՆ / Հայաստան
Ծննդյան երկիր	Լիբանան
Լեզուներ	հայ., անգլ., արաբ.
Ազդեցության ոլորտներ	տնտեսություն, անվտանգություն, գրականություն, գինեգործություն, շահերի պաշտպանություն, մտավորականություն
Զբաղեցրած պաշտոններ	**Նախագահ և Գործադիր տնօրեն՝** PFC Energy **Նախագահ՝** PFC Energy International **Գործադիր տնօրեն՝** First Energy Bank

Վահան Զանոյանը անվանի ամերիկահայ գործիչ է, ում բազմաոլորտ գործունեությունն ընդգրկում է տնտեսագիտության, ազգային անվտանգության, էներգետիկայի աշխարհաքաղաքականության, գինեգործության, գրականության, շահերի պաշտպանության և Հայաստանի քաղաքական ու հասարակական դիսկուրսում գաղափարական առաջնորդության ոլորտները:

Ծագումով մուսալեռցի Զանոյանը ծնվել է Լիբանանում, մեծացել՝ Անջարում և Բեյրութում: 1975 թվականից տեղափոխվելով ԱՄՆ՝ բնակվել է մի շարք քաղաքներում՝ Ֆիլադելֆիաում, Վաշինգտոնում, Նյուպորտ Բիչում (Կալիֆոռնիա), ինչպես նաև Լոզանում (Շվեյցարիա), Բահրեյնում և Հայաստանում: Ներկայումս իր ժամանակը բաժանում է Նյուպորտ Բիչի, Երևանի և Վայոց ձորի միջև՝ վերջինում կառուցելով իր երազանքի տունը:

Նախնական կրթություն Զանոյանը ստացել է Անջարի քույր Հեղվիգի հայկական Ավետարանական դպրոցում, այնուհետև՝ Բեյրութի Հայ Ավետարանական քոլեջում, որտեղ նրա հայրը՝ հանգուցյալ Բաբկեն Զանոյանը, եղել է լեգենդար մանկավարժ: 1972 թվականին ստացել է քաղաքական գիտությունների բակալավրի, իսկ 1975-ին՝ տնտեսագիտության մագիստրոսի աստիճան Բեյրութի Ամերիկյան համալսարանում: 1975-1978 թվականներին շարունակել է հետբուհական ուսումը Փենսիլվանիայի համալսարանում:

Որպես փորձագետ՝ Զանոյանը խորհրդատվություն է տրամադրել մի շարք կառավարությունների՝ ԱՄՆ, Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Ղազախստան և Ծոցի մի շարք երկրներ՝ ազգային անվտանգության, աշխարհաքաղաքական և գլոբալ

էներգետիկ հարցերում: Գլխավորել է PFC Energy ընկերությունը Վաշինգտոնում, PFC Energy International-ը՝ Ճվեյցարիայում, և First Energy Bank-ը՝ Բահրեյնում:

Որպես գրող՝ Զանոյանը հեղինակել է երկու հայերեն բանաստեղծական ժողովածու՝ «Վերադարձ» (2010 թ.) և «Եզրէն Դուրս» (2011թ.), ինչպես նաև չորս անգլերեն վեպ՝ A Place Far Away («Հեռավոր մի տեղ») 2013 թ., The Doves of Ohanavank («Օհանավանքի աղավնիները») 2014 թ., *The Sacred Sands* («Սուրբ ավազներ») 2016 թ., և *Waking Noah's Vines* («Նոյի որթատունկերի արթնացումը») 2019 թ., որոնցից երեքը թարգմանվել են հայերեն:

Իր մասնագիտական և գրական գործունեությունից զատ՝ Զանոյանը ներգրավված է նաև հումանիտար ծրագրերում, մասնավորապես՝ մարդկանց առևտրի դեմ պայքարում: Վերջին տարիներին նա նաև խթանել է Հայաստանի գինեգործության և գինու տուրիզմի զարգացումը:

Զանոյանի ամենամեծ արժեքը նրա ռազմավարական մտածողության և հեռատեսության մեջ է՝ հազվադեպ և առավել ու ավելի կարևոր որակ Հայաստանի համար: